

ՀՈՒՆԻՍ 2020

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ





1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	4
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	5
1.2. Ջրաչափերի տեղադրում և փոխարինում	8
1.3. Ջրահեռացման համակարգ	9
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	10
1.5. Էներգահամակարգ	10
1.6. Մեքենա-մեխանիզմներ	11
2. Առևտրային տնօրինություններ	12
2.1. Բաժանորդների տվյալներ	13
2.2. Հասույթ	13
2.3. Գանձում	15
2.4. Դեբիտորական պարտքեր /Իրավաբանական վարչություն/	15
2.5. Ջրաչափեր	17
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	18
3. Տեխնիկական տնօրինություն	19
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	20
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	21
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	24
3.4. Ջրատար համակարգի բարելավում	24
3.5. Գոտիավորման աշխատանքներ	26
4. Լրատվական ծառայություն	30
5. Որակի, առողջության և անվտանգության ծառայություն	33
5.1. Փաստաթղթերի մշակում	34
5.2. COVID-19 համավարակի կանխարգելման միջոցառումներ	34
5.3. Դասընթացներ	35
5.4. Արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն և անվտանգության ստուգայցեր	36
5.5. Անհատական և կոլեկտիվ պաշտպանության միջոցների բաշխում	37
5.6 Այլ աշխատանքներ	37
6. Համակարգչային ցանց և սերվերային համակարգ	38
6.1. Համակարգչային ցանց	39
6.2. Բնտերակոլեկտիվ համակարգ	39

ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում շահագործման տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարառորոնողական և ջրագծերի վերակառուցման, ինչպես նաև ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքներ: Վերջիններիս հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև:

Քաղաք Երևան

● Կենտրոն վարչական շրջան

«Արևելք» ՏՏ «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Քաջագունի թաղամաս, Ջավարյան և Նար Դոսի փողոցների հատվածում առկա էր զգալի ջրակորուստ: Տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են լայնածավալ աշխատանքներ ջրագծերի այլընտրանքային միացումներն իրականացնելու ուղղությամբ, խցափակվել են $d=400$ մմ, $d=250$ մմ և $d=150$ մմ վթարային վիճակում գտնվող ջրագծերը: Աշխատանքների կատարման ընթացքում օգտագործվել են ճկուն միացումներ և խամուտ անցումներ, տարբեր տրամագծի պոլիէթիլենային կցամասեր, կառուցվել է $d=32$ մմ $L=6$ զծ/մ պոլիէթիլենային խողովակ, տեղադրվել է $d=150$ մմ թվով 2 փական: Անհրաժեշտություն է առաջացել իրականացնել թվով 5 բնակիչ-բաժանորդների ջրագծերի վերամիացում նոր կետերից և ջրաչափերը տեղափոխվել են սահմանազատման կետ:

Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է $D=250$ մմ $L=800$ զծ/մ երկարությամբ թուջե քայքայված ջրագիծը, ինչպիսիք է մոտ $Q=25$ լ/վրկ ջրաքանակ, ավելացել է ջրամատակարարման շարունակականությունը:



Քաղաք Երևան

● Նոր-Նորք վարչական շրջան

«Հյուսիս» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Գյուրջյան փողոցի վերջնամասում գտնվող $D=300$ մմ պողպատե ջրագիծը գտնվում էր ծայրաստիճան քայքայված վիճակում, առկա էին բազմաթիվ վթարներ և ջրակորուստ: Խնդրի կարգավորման համար «Հյուսիս» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել է $D=90$ մմ $L=240$ զծ/մ պոլիէթիլենային խողովակի տեղադրում ներթափանցման միջոցով: Արդյունքում սնտեսվել է $Q=10$ լ/վրկ ջրաքանակ:



● *Քաղաք Երևան*

Մաֆարյան փողոց 2 և Նանսենի փողոց 5/1 շենքերը սնող D=100մմ թուջե քայքայված ջրագիծը ներթափանցման միջոցով փոխարինվել է D=63մմ L=108գծ/մ պոլիէթիլենային խողովակներով և տեղադրվել է D=50մմ թվով 2 փական: Ջրագծի փոխարինման արդյունքում խնայվել է մոտ Q=5լ/վրկ ջրաքանակ:



● *Շենգավիթ վարչական շրջան*

Հարավ» շահագործման տեղամասի աշխատակիցների կողմից Ս.Տարոնց փողոցում գտնվող D=200մմ թուջե քայքայված ջրագիծը փոխարինվել է D=160մմ L=320գծ/մ պոլիէթիլենային խողովակներով, տեղադրվել է D=150մմ փական: Նոր կառուցված ջրագծից իրականացվել է թվով 16 բազմաբնակարան շենքերի ջրագծերի կառուցման աշխատանքներ D=63մմ L=150գծ/մ ընդհանուր երկարությամբ և անհատական մ ի ա գ ու մ ն եր , D=25մմ L=50գծ/մ ընդհանուր երկարությամբ:



● Շենգավիթ 1-ին փողոցում գտնվող D=50մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է D=63մմ L=130գծ/մ երկարությամբ պոլիէթիլենային խողովակներով: Նոր կառուցված ջրագծից իրականացվել են անհատական միացումներ D=25մմ L=60գծ/մ ընդհանուր երկարությամբ և թվով 9 բնակիչ-բաժանորդների ջրաչափերը փոխարինվել և տեղադրվել են սահմանազատման կետերում տեղադրված ջրաչափական դիտահորերում: Վերոնշյալ աշխատանքների շնորհիվ բարձրացել է ցանցի ջրամատակարարման հուսալիությունը և օպտիմալ կառավարումը, տնտեսվել է Q=8լ/վրկ ջրաքանակ:

● *Էրեբունի վարչական շրջան*

«Էրեբունի» շահագործման տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Արցախի փողոց 23 շենքի ջրամատակարարումը իրականացվում էր Երկաթուղայինների փողոցով անցնող ջրագծից D=100մմ պողպատե խողովակներով, որը անցնում էր հարևան տարածքներով և ամբողջովին քայքայված էր: Ջրակորուստներից և վթարներից խուսափելու համար d=100մմ L=150գծ/մ երկարությամբ ջրագիծը շահագործումից հանվել է և տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է D=63մմ L=30գծ/մ երկարությամբ նոր ջրագիծ, որի միացումը իրականացվել է Արցախի փողոցով անցնող D=300մմ թուջե ջրագծից: Իրականացված աշխատանքների արդյունքում բարելավվել է շենքի ջրամատակարարումը, բացառվել են ապօրինի միացումները, խնայվել է մոտ Q=2լ/վրկ ջրաքանակ:



Քաղաք Գյումրի


● Գոտիավորման բաժնի և Շիրակ տեղամասի կողմից ուսումնասիրվել է Գյումրի քաղաքի Տեքստիլ թաղամասի հին ջրամատակարարման ցանցը, քանի որ փորման աշխատանքների արդյունքում պարզվել է, որ հին ջրամատակարարման ցանցում առկա է ջուր: Ուսումնասիրությունների արդյունքում այն հայտնաբերվել է և խցափակվել է գոյություն ունեցող սնուցող ջրագծից, որը փականով ու առանց դիտահոր ասֆալտի տակ ժառանգել էր երկար տարիներ:

Արդյունքում շահագործումից հանվել է $D=100$ մմ, $L=585$ գմ խողովակաշար: Տնտեսվել է 3 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Սևան

● Սևան քաղաքի Նաիրյան փողոցում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում 220մմ թուջե խողովակի վրա հայտնաբերվել է 0,5լ/վ քանակությամբ վթար՝ 200մմ պեթ և 220մմ թուջե խողովակների միացման կետում՝ Նույն 220 մմ թուջե խողովակից դեպի Ս. Սևանեցի փողոց գնացող 150 (0,5լ/վ) և 100 (0լ/վ) մմ պողպատե ջրագծերի ուսումնասիրություններից հետո պարզվել է, որ վերոնշյալ 150մմ ջրագծից օգտվում է միայն Սևանի քաղաքապետարանը, ինչի պարագայում 0,5լ/վ քանակությունը համարվում է ոչ նորմալ: Նշված քանակով ջրի տնտեսման և մոտ 100մ խողովակ շահագործումից հանելու նպատակով Սևան շահագործման տեղամասին առաջարկվել է քաղաքապետարանի միացումը տեղափոխել 100մմ ջրագծի վրա: Նաիրյան 153 շենքի մոտ կատարված վթարավորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է 6լ/վ քանակությամբ վթար:



Քաղաք Գավառ



● Գավառ տեղամասի հետ համատեղ ուսումնասիրություններից հետո որոշվել է Լճափ գյուղի մուտքագծի վրա տեղադրել ճնշման կարգավորիչ փական, ինչի արդյունքում տնտեսվել է ≈ 2 լ/վ քանակությամբ ջուր և զգալիորեն նվազեցվել են ավելցուկային ճնշումները, ինչի հետևանքով կնվազի նաև վթարների հաճախակի առաջացման հավանականությունը:

● Գավառ քաղաքում հետագա աշխատանքները նպատակաուղղված պլանավորելու համար Շահումյան և Մայադյան փողոցները սնող 150 մմ ջրագծի վրա տեղադրվել է գիշերային ծախսաչափ:

Քաղաք Վարդենիս

● Վարդենիս տեղամասի հետ իրականացված վթարա-որոնողական աշխատանքների արդյունքում Շատջրեք ջրաղբյուրից մինչև Սոթքի գ/մ ձգվող, 200մ ստորգետնյա ջրատարից սնվող Շատվան համայնքի գլխամասային ջրաչափից հետո հայտնաբերվել են 13լ/վ ընդհանուր ջրաքանակով 3 վթարներ:



Հունիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	2021
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	36,139
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	26,888
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	12,577
Ջրաչափական հանգույններ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	19
Շահագործումից հանված ջրագիծ	մ	5057
Կառուցված ջրագիծ	մ	3217.3
Կառուցված կոյուղագիծ	մ	477
Վերացված գաղտնի վթարներ	հատ	42
Փոխարինված փական	հատ	26
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	302
Մաքրված դիտահոր	հատ	403
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	114.3
<i>Վերացված վթարներ</i>	<i>Չափման միավոր</i>	<i>Քանակ</i>
Ջրամատակարարման ցանցում	հատ	1107
Ջրահեռացման ցանցում	հատ	2086
Պումպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	291

Հունիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	562	1135	357

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱԴՐՈՒՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է հունիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ									
	15	20	25	32	40	50	65	80	100	Ընդամենը
Տեղադրված	100	14	2	0	0	0	0	0	0	116
Փոխարինված	386	37	3	1	2	1	0	1	0	431
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	8	5	0	1	1	1	0	0	0	16
Ընդամենը	494	56	5	2	3	2	0	1	0	563

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 192 ջրաչափ: Կատարված աշխատանքների 87,74%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՇԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հունիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Գոյուղագծերի լվացում մ	Գոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Գոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	1430	196	88
2	Մաշտոց	1960	187	56
3	Շահումյան	1445	168	0
4	Զեյթուն	730	152	6
5	Շիրակ	1015	451	6
6	Ալավերդի	400	64	15
7	Ապարան	0	28	0
8	Արթիկ	1514	21	72
9	Աշոցք	0	5	0
10	Բերդ	0	9	0
11	Իջևան	690	26	0
12	Լոռի	2522	208	0
13	Նոյեմբերյան	0	17	0
14	Սպիտակ	700	22	0
15	Ստեփանավան	110	3	18
16	Թալին	0	24	6
17	Տաշիր	290	11	0
18	Էջմիածին	8	100	0
19	Չարենցավան	790	76	0
20	Արովյան	2041	62	36
21	Հրազդան	3114	110	60
22	Աշտարակ	2232	26	0
23	Կենտրոն	660	248	0
24	Հյուսիս	180	222	188
25	Հարավ	0	304	0
26	Էրեբունի	140	137	58
27	Արմավիր	0	118	0
28	Արտաշատ	50	99	6
29	Արարատ	718	67	0
30	Մասիս	0	37	0
31	Գավառ	800	22	0
32	Սևան	940	94	0
33	Մարտունի	0	24	0
34	Վարդենիս	0	12	0
35	Ճամբարակ	0	11	0
36	Դիլիջան	150	45	0
37	Վայք	0	14	0
38	Եղեգնաձոր	0	12	0
39	Զերմուկ	0	19	0
40	Սիսիան	240	80	0
41	Գորիս	0	22	0
42	Կապան	0	66	0
43	Մեղրի	0	27	0
	Ընդամենը	24869	3646	615

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ տ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	54,175	21,6
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	77,553	32,4
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	153,680	7
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	140,545	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	117,558	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	17,942	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	12,276	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	7,300	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	10,500	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	7,269	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Հաշվետու ժամանակահատվածում տարածաշրջանային տնօրինությունների սպասարկման տարածքներում պոմպակայանների վրա իրականացված աշխատանքների ամփոփ 0 տեղեկատվությունը ներկայացվում է Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Պ/կ աշխատանքների ամփոփ նկարագիր

Աշխատանքների նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակն ըստ աշխատանքի նկարագրի
Այցերի քանակ	1
Պոմպի աշխատանքի զննում և կարգավորում	105
Էլեկտրական սարքերի զննում և կարգավորում	16
Պոմպի ապամոնտաժում	2
Պոմպի տեղադրում	6
Էլ. ավտոմատ անջատիչի փոխարինում	1
Էլ. հոսանքի լարերի նորոգում	1
Ժամային ռեկեյի տեղադրում	1
Ցածր ճնշման ռեկեյի նորոգում	2

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Հունիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Արևելք» ՍՍ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար հունիս ամսվա ընթացքում նորոգվել են թվով 3 մեքենաների շարժիչները՝ մասնակի և ընդհանուր, փոխարինվել են հանդարտիչներ, կայծամուներ, ներդիրներ, հղկվել և կարգավորվել են գլխիկները:

Թվով 4 մեքենայի արգելակման համակարգերը նորոգվել են, փոխարինվել են արգելակման սալիկները, խողովակները, վակուումները, սկավառակները և ձեռքի ճոպանները:

Ընթացքային մասերի նորոգում է իրականացվել թվով 9 մեքենամեխանիզմների վրա, փոխարինվել են գնդավորներ, հողակապեր, էլաստիկ մուֆտեր, հեղյուսներ, մանեկներ, դեկի ձգաձողեր, ուղղորդիչ վռաններ, մեղմիչներ, անվակունդի առանցքակալներ, հարվածամեղմիչի զսպանակներ և հարվածամեղմիչներ, կարդանի խաչուկներ, ատամնանիփներ, առանցքակալներ, կիսատնիներ, խտաբուկեր, մանեկներ, սատելիտներ:

Թվով 5 մեքենայի մարտկոցները փոխարինվել են նորերով:

Թվով 26 անվադող նորոգվել է, փոխարինվել և հավասարակշռվել:

Փոխարինվել են թվով 90 մեքենամեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ քսայուղեր:

Նորոգվել է թվով 2 մեքենայի փոխանցման տուփերը, փոխարինվել են ատամնանիփները, առանցքակալները, խտաբուկները և ներդիրները:

Թվով 2 մեքենայի վրա, փոխարինվել են կցորդման սկավառակներ, շողկապման մեխանիզմներ, անջատող առանցքակալներ և խտաբուկեր:

Թվով 9 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման ռետինե խողովակներ, միացնել:

Վերանորոգվել են թվով 6 մեքենայի հոսանքի մալուխները, կայծամուներ, կայծամուսի լարեր, ռելեներ, վառոցքի բանալիներ:



Թվով 6 մեքենաների մեկնարկիչները նորոգվել են, փոխարինվել են ածուխները, վռանները, փաթույթները և բենդեքսները:

Թվով 4 մեքենաների և էքսկավատորների համար նորոգվել է բարձր ճնշման մղիչները:

Եռակցման աշխատանքներ է իրականացվել թվով 3 մեքենամեխանիզմների վրա:

Թվով 5 մեքենաների վրա իրականացվել են կամրջակի նորոգում:

Հովացման համակարգի նորոգում է իրականացվել թվով 3 մեքենաների վրա, փոխարինվել են հովացման ռադիատորները, հովացման ռադիատորների կափարիչները, խողովակները, փոկերը և ջրի պոմպերը:

Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենամեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

01.01.2020 թվականին ԵՏՍՍ-ում տեղամասերի թիվին ավելացել է «Թալին» առևտրային տեղամասը ընդհանուր թվով 2020 բաժանորդով, տեղափոխվել է ՄՏՍՍ-ից:

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.07.2020թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել ԵՏՍՍ-ում 338,146, իսկ ՄՏՍՍ-ում՝ 174,572 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	2019թ. մայիսից - 2020թ. հունիս ամիսներին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	423,019	324,185	76,6
		Իրավաբանական անձ	20,108	13,961	69,4
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	206,823	168,038	81,3
		Իրավաբանական անձ	7,941	6,534	82,3
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	629,842	492,223	78,15
		Իրավաբանական անձ	28,049	20,495	73,07

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	467,050	392,705	84,1
		Իրավաբանական անձ	23,784	15,603	65,6
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	254,635	206,823	81,2
		Իրավաբանական անձ	10,164	7,941	78,1
	Ընդամենը	Բնակիչ-բաժանորդ	721,685	599,528	83,07
		Իրավաբանական անձ	33,948	23,544	69,35

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի վերահսկողական խմբի աշխատակիցների կողմից:

ԵՏՍՍ սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 124 նոր բաժանորդ, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 38 նոր բաժանորդ: ԵՏՍՍ տեղամասերում հունիս ամսվա ընթացքում ծառայություններ ստացած բաժանորդների թիվը (այցելությունների թիվը) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 38,422 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 10,4 տոկոս, իսկ ՄՏՍՍ տեղամասերում, չնայած Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 38,548 բաժանորդով, ինչը կազմում է մոտ 18 տոկոս:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Սպառման ծավալների ավելացման նպատակով շարունակվում են կասկածելի սպառման ծավալներ ունեցող իրավաբանական անձ հանդիսացող, ինչպես նաև ԵՏՍՍ-ի և ՄՏՍՍ-ի «Լոռի», «Շիրակ», «Սևան» տեղամասերի սպասարկման տարածքների բնակիչ-բաժանորդների ջրաչափերի փոխարինման աշխատանքները: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր՝ բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և տեղափոխվում են բաժանորդների տարածքից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը:


Բոլոր փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Հունիս ամսվա ընթացքում ԵՏՍՍ-ում ստուգաչափվել է 1,714, իսկ ՄՏՍՍ-ում՝ 828 ջրաչափ:

h/h	Տարածաշրջան	Սպառողներ	Սարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 06.2020
1	Երևան	Բնակիչ-բաժանորդ	628	829	168	1625
		Իրավաբանական անձ	24	48	17	89
2	Մարզեր	Բնակիչ-բաժանորդ	231	481	81	793
		Իրավաբանական անձ	9	24	2	35
	Ընդամենը		892	1382	268	2542

Ստուգաչափված ջրաչափ (Երևան)



Ստուգաչափված ջրաչափ (Մարզեր)




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: ԵՏՍՍ-ում հունիս ամսվա ընթացքում փոխարինված 1,714 ջրաչափերի մոտ 62 տոկոսը անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն, իսկ ՄՏՍՍ-ում փոխարինված 828 ջրաչափերի մոտ 71 տոկոսը (կամ 588 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն: Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:


Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա բաժանորդների տվյալների բազա է մուտքագրվել ԵՏՍՍ-ի մոտավ 87,324 մ3, իսկ ՄՏՍՍ-ի՝ 37,285 մ3 վերահաշվարկված հասույթ (70.08%՝ Երևան և 29.92%՝ մարզեր):

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2020թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ (Երևան)



Հասույթ (Մարզեր)



Հասույթի տվյալներում 2019թ. ցուցանիշից հանված են ՄՏՍՏ-ից ԵՏՍՏ տեղափոխված թվով 5 տեղամասերի (Աբովյան, Ապարան, Էջմիածին, Մասիս և Թալին) ցուցանիշները:

2.3 ԳԱՆՁՈՒՄ

Գանձման բարձր մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ ճիշտ ձևավորված հասույթ: Հունիս ամսին գանձումը ԵՏՍՏ-ում կազմել է 1,238,440 մլն ՀՀ դրամ, իսկ ՄՏՍՏ-ում՝ 396,084 մլն ՀՀ դրամ: Նախորդ ամսվա ձևավորած հասույթի դիմաց վճարումներն ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում է բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն: Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՍՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Առևտրային տնօրինությունների աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը՝ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով: Հունիս ամսվա ընթացքում ԵՏՍՏ կողմից կնքվել է թվով 37 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 10.9 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, իսկ ՄՏՍՏ կողմից՝ թվով 15 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 3,561 հազար ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:

Դեբիտորական պարտքերի վերաբերյալ բաժանորդներին պարբերաբար ուղարկվում են հիշեցումներ (փոստային ծանուցում): Գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հիշեցում ստացած, բայց վճարում չկատարած բաժանորդների հետ տարվում են անհատական աշխատանքներ: Անհրաժեշտության դեպքում իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարող բաժանորդների ջրամատակարարումը դադարեցվում է կամ պարտքերի գանձմանը տրվում է իրավական ընթացք:

Հունիս ամսվա ընթացքում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից ներկայացված 10 000 000 ՀՀ դրամից բարձր բռնագանձման գործեր: Խոսքը վերաբերում է մասնավորապես հետևյալ ընկերություններին:

Հ/Հ	Պատասխանող	Հայցի առարկան /հայցապահանջը, հայցագիրը/, ՀՀ դրամ
1	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	14. 897. 386
2	Ազատաշեն համայնք	12. 511. 000
3	«Էլիտ Սերվիս» ՍՊԸ	11. 440. 944
4	«Նոր Հաճն» ՀՈԱԿ	114. 597.534
5	«Արտաշատի տրիկոտաժի Ֆաբրիկա» ԲԲԸ	14.009.047
	Ընդամենը	167.455.911

Առ այսօր պարտքերի մարման վերաբերյալ կնքված ժամանակացույցերի քանակը կազմում է 3387 հատ, իսկ պարտքերից ակնկալվող գումարը կազմում է 2. 680. 006. 883 ՀՀ դրամ:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տարածաշրջան	Պարտքը 01.07.2020թ. դրությամբ (մլն.դրամ)	Այդ թվում ապրիլ ամսվա հասույթ (մլն դրամ)
Երևանի տարածաշրջան, այդ թվում	4,592.6	1,485.5
Բնակիչ-բաժանորդներ	3,432.2	1,000.2
Իրավաբանական անձեր	1,160.4	485.3
Մարզերի տարածաշրջան, այդ թվում	1,936.8	471.6
Բնակիչ-բաժանորդներ	1,484.3	353.9
Իրավաբանական անձեր	452.5	117.7
Ընդամենը, այդ թվում	6,529.4	1,957.1
Բնակիչ-բաժանորդներ	4,916.5	1,354.1
Իրավաբանական անձեր	1,612.9	603


Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում շուրջ 199.0 մլն ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2020 թ.դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Երևան)



2020 թ. դեբիտորական պարտքերի շարժը, մլն.դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.07.2020 թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում.

Տարածաշրջան	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Երևան	Ջրաչափով	453,626	391,665	86.3	23,101	15,595	67.5
	Առանց ջրաչափի	13,424	1,040	7.7	683	8	1.2
Մարզեր	Ջրաչափով	231,895	180,132	77.68	9,687	6,709	69.26
	Առանց ջրաչափի	21,194	1,217	5.74	240	4	1.67
Ընդամենը	Ջրաչափով	685,521	571,797	83.41	32,788	22,304	68.02
	Առանց ջրաչափի	34,618	2,257	6.52	923	12	1.30

Տվյալների բազայում 01.07.2020թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով.

Տարածաշրջան	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Երևան	592,652	301,218	50.83	25,968	7,559	29.11
Մարզեր	264,864	74,142	27.99	10,809	2,065	19.10
Ընդամենը	857,516	375,360	43.77	36,777	9,624	26.17

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում Երևանում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) շուրջ 1766, իսկ մարզերում՝ 1629 ջրաչափական սարք: Այդ թվում՝ ԵՏՍՍ սպասարկման տարածքում նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 54, իսկ ՄՏՍՍ սպասարկման տարածքում՝ 71 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճշգրիտ հաշվառմանը:

ԵՏՍՏ սպասարկման տարածքում ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափների ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափների քանակ	%
գ.Քասախ	2296	1864	81.2
գ.Պռոշյան	1541	1014	65.8
ք.Հրազդան, միկրոշրջան թաղ.	5796	1748	30.2

«Լոռի» տեղամասում ընկերության վարչական և տեխնիկական տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Չնայած երկրում տիրող համաճարագային իրավիճակին, հունիս ամսին ջրաչափերի փոխարինման որոշակի աշխատանքներ են իրականացվել Լոռի, Շիրակ, Գորիս, Կապան, Սիսիան, Արարատ և Արտաշատ տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է՝ Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 7,006, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 4,552, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 826, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 1,311, Սիսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 784, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1123 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 1013 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Շարունակվում են ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Ապօրինությունների հայտնաբերման արդյունքում կազմված արձանագրությունները «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, հասցեները փոխանցվում են տարածաշրջանի տնօրինությանը ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա հաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տարածաշրջան	Քանակ	Խ.մ.	Գումար (դրամ)
Երևան	109	127,760	20,035,059
Մարզեր	19	47,886	7,360,959
Ընդամենը	128	175,646	27,396,018

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված է Երևան քաղաքի հունիս ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը՝ 98.2%, ինչը 0.1 %-ով ավել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:




Ջրամատակարարման շարունակականություն



Հաշվետու ամսվա ընթացքում շարունակականության և մոնիթորինգի խմբի կողմից ՇՏ-նորում կարգաբերվել են 27 ՃԿՊ-ներ:



Ստորև ներկայացված են որոշ կարգաբերված ՃԿՓ-ների վրա տեղադրված ճնշման լուգերների գրաֆիկները.

- Երևան քաղաքի Խանջյան փողոցի ՃԿՓ-ի պիլոտի փոխարինման և կարգաբերման արդյունքում ջրաքանակը նվազել է 10 լ/վ-ով, իսկ Սաղմոսավան գյուղի ՃԿՓ-ի կարգաբերումից հետո ջրաքանակը նվազել է \approx 11 լ/վ-ով:




Հաշվետու ամսվա ընթացքում գոտիներում ջրաքանակների ուսումնասիրության և հոսակորուստների հայտնաբերման համար 13 հասցեներում տեղադրվել են Seba UDM-200 տիպի հոսքաչափեր:

Ստորև ներկայացված է տեղադրված հոսքաչափերի հասցեները և գրաֆիկական պատկերները:




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1, 2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաբանակը 2020թ-ի հունիս ամսին, 2019թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 202 կՎ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 27 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում նվազել է 23237 ԿՎտ.ժ. (4,84%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Երևան քաղաքի բակային պոմպեր ԱՌԱՆՅ ԽԱՐԲԵՐԴԻ ՊՈՄՊԱԿԱՅԱՆԻ*




Մեծ ուշադրություն է հատկացվել նոր տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների ծախսերին՝ ոչ միայն խախտումների կանխման, այլև ծախսի ժամային գրաֆիկների վերլուծության փոքր յուրաքանչյուր պոմպի շահագործման խնդիրների հայտնաբերման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է 43 հասցե: Թվով 2 հասցեներում հայտնաբերվել են հավելագրումներ, որոնք ճշտագրվել են ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից:

● Էջմիածին քաղաքում տեղադրված ընթերցվող էլ. հաշվիչների և իրականացրած վերահսկողության արդյունքում էլ. եներգիայի ծախսը նվազել է 2292,32 ԿՎտ.ժ կամ 10.6% անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Էջմիածին




Կատարված աշխատանքներ

Թվով 192 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որի արդյունքում թվով 69 հասցեներում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Ինվերտորների տեղադրում

Իննը հասցեներում թվով 24 պնևմատիկ համակարգեր փոխարինվել են ինվերտորային համակարգով, էլեկտրաէներգիայի ծախսը նվազել է 3526,55 ԿՎտ/ժամ (15%) անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Տեղադրված ինվերտորների սպառած էլեկտրաէներգիա



Հաշվետու ժամանակահատվածում 69 խոշոր պոմպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները հայտնաբերվել և վերացվել:


● Հունիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայաններում էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 64,747 ԿՎտ.ժ կամ 2,15% (անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ):

Երևան քաղաքի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Մարզերի ջրարտադրության պոմպակայաններում էլ. էներգիայի ծախսը նվազել է 72,479 ԿՎտ.ժ կամ 2,88 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Մարզերի ջրարտադրության պոմպակայանների սպառած էլ. էներգիա



Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն նվազել է 19,790 ԿՎտ.ժ կամ 0,32 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեղիա Զուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիա



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● Ստորև աղյուսակում ներկայացնում են հունիս ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

<i>Աշխատանքի անվանում</i>	<i>Չ/Մ</i>	<i>Քանակ</i>
Շենգավիթ համայնքի կոյուղագծերի թվայնացում	մետր	83783.1
Տեխնիկական պայմանների թվայնացում հունիսի ընթացքում	հատ	48
Կենտրոն տեղամասի համար A0 ձևաչափով աշխատանքային քարտեզների պատրաստում	հատ	8
Կառուցված ջրագծեր	մետր	437.8
Շահագործումից հանված ջրագծեր	մետր	383.6
Կառուցված կոյուղագծեր	մետր	52
Շահագործումից հանված կոյուղագծեր	մետր	42
Արտաշատ քաղաքի ջրագծերի թվայնացում և ԱՏՀ տվյալների լրացում բազայում	տոկոս	80
Երևան քաղաքի շենքերի տեղադիրքի և փողոցների թվայնացման աշխատանքներ	տոկոս	20
Smart monitoring հավելվածի օգնությամբ ջրագծերի թվայնացման գործընթացի իրականացում	հատ	1
Աշխատանքային թեմատիկ քարտեզների պատրաստում	հատ	16
Կատարվել է Արտաշատ և Մասիս քաղաքի կատարողական գծագրերից, AutoCad ձևաչափից տեղափոխում ԱՏ համակարգ	հատ	1
Նոր Ախուրյան ջրագծերի թվայնացում	հատ	1
Աշտարակ քաղաքի, Կոշ և Մասունիկ գյուղերի կոյուղագծերի թվայնացում	մետր	45,076.821

3.4. ԶՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերվել են մի շարք վթարներ. Ստորև ներկայացնում ենք հաշվետու ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

Արգնի 2

Ընթացիկ ամսում վերացվել են ջրատարի վրա նախկինում հայտնաբերված մի շարք վթարներ՝ կազմակերպելով ջրատարի կանգառ:



Փոխարինվել են երկու D=250մմ ջրթող փականներ և երկու վթարված օդահեռ փականներ (D=50մմ):



Ջրատարի կանգառի ընթացքում շինարարի կողմից նաև փոխարինվել է ջրատարի ծավված հատվածը, որն առաջացել էր սողանքի հետևանքով:



Արարատյան

Կազմակերպվել է Արարատյան ջրատարի կանգառ, որի ընթացքում շինարարը պետք է փոխարիներ ջրատարի մի հատվածը, սակայն այդ աշխատանքին զուգահեռ նաև Նորաբաց գյուղի չոր խցում գոյություն ունեցող D=350մմ հատվածը փոխարինվել է D=700մմ խողովակով, ինչպես նաև խցափակվել է Արզական-Խարբերդ ջրատարի հոսակորուստ ունեցող փականը:

Գառնի-Արտաշատ

Ջրատարի վրա հայտնաբերվել է, ապա վերացվել է ≈ 40 լ/վ արտահոսքով վթար:



Ապարան-Երևան

Ջրատարի վրա հայտնաբերվել, ապա վերացվել են 2 վթարներ ≈ 15 լ/վ արտահոսքով: Տարբեր տեղամասներում խմբի աշխատակիցների կողմից կատարվել են ջրաքանակի կարգավորման աշխատանքներ:


3.5 ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● Ս.թ. հունիս ամսվա ընթացքում գոտիավորման բաժինն իրականացրել է լայնածավալ աշխատանքներ, որոնք ընդգրկել են ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ Վանաձոր, Սևան, Վարդենիս, Արմավիր, Արմյան, Գյումրի, Արագյուղ, Գորիս, Արարատ, Վեդի, Վաղարշապատ, Երևան համայնքների ջրամատակարարման ցանցերը:


● Ընտրված որոշ 24-ժամյա ջրամատակարարում ունեցող գոտիներում տեղադրվել են գիշերային ծախսաչափեր՝ հասկանալու համար ջրի բաշխման բալանսը և գաղտնի վթարների առկայությունը:

● Ուսումնասիրվում են նաև գոտիների գլխամասերում տեղադրված և Locator համակարգին միացված էլեկտրոնագնիսական ծախսաչափերի տվյալները: Այդ աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և տեղամասերի կողմից վերացվել են 25 հատ գաղտնի վթարներ՝ տնտեսելով 18 լ/վ ջրաքանակ և արդյունքում բարելավելով բազմաթիվ թաղամասերի ջրամատակարարումը ու վերացնելով բաժանորդների ջրի ճնշումների հետ կապված բողոքները: Աշխատանքներն ամբողջությամբ արտացոլվել են SMART MONITORING & STRATEGY համակարգում:


Երևանի Բագրատունյաց 49, 51 պոմպակայանի գիշերային ծախսաչափի տվյալներ




Իջևանի Երևանյան փողոցի ջրագծի գիշերային ծախսաչափի տվյալներ




Երևանի Շահումյան համայնքի Ջամբուլի փողոցի գիշերային ծախսաչափի տվյալներ




Երևանի Բազրատունյաց 22 պուրպակայանի գիշերային ծախսաչափի տվյալներ




Իջևանի մայիսի 28 փողոցի գիշերային ծախսաչափի տվյալներ




Երևան Մայաթ-Նովա փողոցի 4 շենքի մոտ ջրազծի գիշերային ծախսաչափի տվյալներ




Երևան Ավան Բարաջանյան փողոցի ջրազծի գիշերային ծախսաչափի տվյալներ




Իջևան ՕԿՁ-ի մոտ ջրագծի գիշերային ծախսաչափի տվյալներ




Գավառ Շահումյան և Սայադյան փողոցների ջրագծի գիշերային ծախսաչափի տվյալներ




Օհանավան, Կարբի, Մուղնի ջրատարերի վրա տեղադրված գիշերային ծախսաչափերի տվյալներ



Երևան, Ավան Բարաջանյան փողոցի նարկոդիսպանսերի մոտ ջրագծի վրա տեղադրված գիշերային ծախսաչափի տվյալները



Երևան Ավանի Բարաջանյան փողոցի, Ավան Առինջ և Ադի Հանք թաղամասերի ջրագծերի վրա տեղադրված գիշերային ծախսաչափերի ընդհանուր տվյալները



Գոտիավորման բաժինն Էներգովերահսկողության խմբի հետ համատեղ աշխատանքներ է իրականացվել Երևան քաղաքի այն պոմպակայաններում, որտեղ հոսանքի գիշերային ծախսերում նվազում չի նկատվել: Ուսումնասիրելով էլեկտրաէներգիայի չափիչների արդյունքները Էներգովերահսկողության խմբի աշխատակիցների կողմից ներկայացվել են պոմպակայանի հասցեները: Գոտիավորման բաժնի կողմից ուսումնասիրվել են այդ պոմպակայանների ջրամատակարարման սխեմաները, որի արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ վթարներ: Այդ հասցեներն և հայտնաբերված վթարների ջրաքանակները ներկայացված են աղյուսակում ստորև:

աղյուսակ 8

Հ/Հ	Պոմպակայանի հասցե	Հայտնաբերված վթարի ջրաքանակ
1	Նժդեհի 58	0,3
2	Էրեբունի 23	0.2
3	Խուդյակով 70	1

Տարբեր տեղամասերում եղած խնդիրները հասկանալու, եղած ավելցուկային ճնշումները կառավարելու և ջրաքանակները խնայելու նպատակով տեղամասի հետ համատեղ իրականացվել են քննարկումներ, որի արդյունքում տեղադրվել են նաև ճնշման լոգերներ ու գիշերային ծախսաչափեր բարձրացված խնդիրներին լուծում տալու համար:

ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



2020թ. հունիսին, ինչպես և ամեն տարի շոգ եղանակների ու խմելու ջրի պահանջարկի ավելացման հետ կապված, որոշակիորեն ավելացավ հասարակության ուշադրությունը Վեոլիա ջուր ՓԲԸ գործունեության նկատմամբ:



Ջուրահեռաբար, հաշվետու ժամանակամիջոցին Հանրային կապերի բաժինը /ՀԿԲ/, ներգրավված Խորհրդատվական ՄԵՏԻԿԿԱ ընկերության հետ համատեղ, միջոցներ ձեռնարկեց ջրամատակարարման առումով իրավիճակը հանրությանը օբյեկտիվորեն ներկայացնելու, համակարգում տարվող աշխատանքների մասին պատմելու, սպառողներից ստացվող դիմումները ընկերության համապատասխան ծառայություններին անմիջապես հասցնելու և այս միջոցով քննադատությունը կանխարգելելու համար:

Առավել ևս, որ ՎեոլիաԹիմը զգալի աշխատանք էր կատարում ինչպես համակարգում առաջացող ամենօրյա խնդիրների, այնպես էլ միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերի իրականացման ուղղությամբ: Չնայած COVID 19 - ի առաջացրած խնդիրներին, որոնցով պայմանավորված Օպերատորը շատ աշխատանքների ձեռնամուխ եղավ որոշ ուշացումով, մինևս այն է իրավիճակը ջրամատակարարման առումով Հայաստանում զգալի բարելավվել է, որի ապացույցը բողոքների քանակի ակնհայտ նվազումն է նախորդ տարիների նկատմամբ:



Հանրության հետ հաղորդակցության կապուղի դարձած ֆեյսբուք սոցիալական ցանցի Վեոլիա Ջուր/ Veolia Armenia էջի միջոցով մշտապես ներկայացվել է Ընկերության աշխատանքը, օրական 2-3 հրապարակում իրականացնելու միջոցով: Բսկ դրանց գրավչությունն ու մատչելիությունն ապահովելու համար, լայնորեն կիրառվել է ինֆոգրաֆիկան, կոլաժը, GIF-ը, տեսանյութը, պլակատը, լուսանկարը, հակիրճ հաղորդագրությունը շահեկան թվերի ու փաստերի ներկայացմամբ:

Բնականաբար, առաջին հերթին ուշադրություն է դարձվել արտակարգ իրավիճակներում գործելուն, բաժանորդների հնարավոր դժգոհությունը բացառելու կամ մեղմելու համար: Այստեղ կարելի է նշել Արզնի-Երևան թիվ 1 և 2 մայրուղային ջրատարների վթարները, որոնց վերացմանն ընթացքը լուսաբանվել է երբեմն 2 և 3 անգամ օրվա ընթացքում: Նույնպես օպերատիվորեն հանրությանն է ներկայացվել Երևանի հարակից Մերձավան գյուղում ոչ Վեոլիայի մեղքով տեղի ունեցած ջրագծի վթարը, որը վերացվեց շատ արագ: Ծարունակաբար անդրադարձ է կատարվել, այդ թվում Հայաստանում ամենահեղինակավոր Հանրային հեռուստատեսության միջոցով, Երևան քաղաքի և հարակից բնակավայրերի համար կենսական նշանակություն ունեցող Արարատյան-Երևան մայրուղային ջրատարի 850 մետր ընդհանուր երկարությամբ 4 հատվածների փոխարինմանը: Քանիցս ներկայացվել է «Շոր-Շոր - Երևան» մայրուղային ջրատարի և համանուն պոմպակայանի վերակառուցման ընթացքը, որը շատ կարևոր է Երևանն ամռանը ջրով ապահովելու գործում: Տեխնիկական նշանակության ավտոտրանսպորտային միջոցների հերթական խմբաքանակի ստացմանն անդրադարձել է և ներկայացրել դրա կարևորությունը Արմենիա հեռուստատեսությամբ: Ընդ որում, միջոցառմանը ներկա է եղել ՀՀ ՏԿԶ նախարար Մուրե՛ն Պապիկյանը, որի պարզաբանումը տեղ է գտել ֆեյսբուք սոցիալական ցանցում: Նույն հեռուստատեսությամբ հանրությանը ներկայացվել են ջրի որակի ապահովման նպատակով Հայաստան ներկրված ամենաժամանակից սմարթ սարքավորումներն ու ռեակտիվները:

Ջրաշինարարությունից բացի, մեծ ուշադրություն է դարձվել ընկերության գործունեության մյուս ուղղություններին:

Փորձ է արվել ներկայացնել համակարգի աշխատանքը հնարավորինս լայն: Մասնավորապես, հրապարակվել են թափուր աշխատատեղերի մասին հայտարարություններ, ապրանքների և ծառայությունների մատակարարման մրցույթների հրավերներ, գործունեության վերաբերյալ ամսական և ֆինանսական տարեկան հաշվետվություններ: Մակայն այս բոլոր բազմաքանակ և բազմաբովանդակ հրապարակումներն ունեցել են մեկ միավորող գաղափար: Այն է՝ ցույց տալ, որ Հայաստանում գործում է աշխարհառջակ Վեոլիա թիմի մաս կազմող մասնագիտացված կազմակերպություն, ինչն ինքնին հանդիսանում է վերցրած պարտավորությունների կատարման երաշխիք: Այս կապակցությամբ եղել են հրապարակումներ նաև գուտ Վեոլիա Գրուփի գործունեության մասին ողջ աշխարհում:



#ՎեոլիաԹիմ #ՄերօրյաՀերոսներ #ԱՐԻԳՈՐԾԻ
 #ՎեոլիանԱշխարհում #ՎեոլիաՄեծՇնտանիք
 #ՎեոլիաՄեծՇնտանիքիՄիՄաս, #ՎեոլիաԳրուփ,
 #ՀամաշխարհայինԱռաջատար, #ՎեոլիաՀայաստան
 #ԽոշորՀարկատու, #ԳործԿա #ԽոշորԳործատու,
 #Վեոլիան Թվերով – այս և նման այլ հեշթեգերն արդեն ամեն ինչ ասում են հրապարակումների նպատակադրվածության մասին:
 Հաղորդակցության նման ժամանակակից ու արդյունավետ գործիքների կիրառմամբ փորձ է արվել օգնել լուծելու ընկերության համար հրատապ մի քանի խնդիրներ: Օրինակ, մատուցված ծառայությունների դիմաց վճարումների ակտիվացումը, որի գործում Հայաստանում հայտարարված բնակչության տեղաշարժի սահմանափակյալ պայմաններում որոշակի դժվարություններ էին առաջացել: Խոսքը մասնավորապես առցանց եռանակով՝ բանկերի կողմից առաջարկվող վճարային հավելվածների և վճարման տերմինալներից օգտվելու մասին է / #ԺամանակիՏնտեսում #Պարբերական Փոխանցումներ/:

Չեն մոռացվել նաև ընկերության ղեկավարների հանդիպումները ՀՀ պատկան մարմինների ղեկավարների հետ, տոները, հանրային կարևորության մյուս իրադարձությունները և հիշարժան օրերը սպառողներին շնորհավորելու համար: Օրինակ՝ Վեոլիա ջրի գլխավոր տնօրեն Մարիաննա Շահինյանի հանդիպումը ՀՀ ՊՆ Դավիթ Տնտյանի հետ, հունիսի 1-ը՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը, հունիսի 5-ը՝ Շրջակա միջավայրի համաշխարհային օրը:

Ընդ որում, այս ամենի զգալի մասն իր տեղն է գտել նաև veolia.am կայքում որպես նորություն, մամուլի հաղորդագրություն և այլ պաշտոնական հայտարարություն: Մասամբ էլ ներկայացվել է ՋԼՄ-ներին, ՀՀ պատկան մարմիններին՝ իրազեկված լինելու և այդ կերպ Վեոլիա Ջրի գործունեության մասին դրական կարծիք ունենալու համար:

ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

5.1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

● ՈԱԱ ծառայությունը, ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներով, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Բեռնաբարձման աշխատանքներ» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտով, մշակեց և Ընկերության գլխավոր տնօրենի 17.06.2020թ. N 39 Լ հրամանով գործողության մեջ դրեց «Բեռնաբարձման/բեռնաթափման աշխատանքների անվտանգության հրահանգ N 27»-ը:



5.2. COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

● Ծառայությունը, յուրաքանչյուր աշխատանքային օր Ընկերությունում՝ COVID-19 համավարակի կանխարգելման և Ընկերության ընթացիք աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն փոխանցեց էլեկտրոնային գրությամբ ՀՀ Ջրային կոմիտե:

● Միաժամանակ գուգահեռ այս գործընթացին ՈԱԱ Ծառայությունը Ընկերության Ղեկավար կազմին և ստորաբաժանառւմների պատասխանատուներին Պարետի ընդունած որոշումների վերաբերյալ իրազեկեց:

● ՈԱԱ Ծառայությունը, ՄՌՄ բաժնի հետ համատեղ, օպերատիվ կերպով Ընկերությունում COVID-19-ով վարակված կամ կոնտակտավոր աշխատողների մասին համապատասխան տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներին:


● ՈԱԱ Ծառայությունը, ելնելով Պարետի 2020թ. Մայիսի 3-ի N 63 որոշմամբ սահմանված համապատասխան անվտանգության կանոնների ապահովման պահանջներից, որակի գնահատում իրականացրեց Ընկերության թվով 28 ստորաբաժանառւմներում:

● Ծառայությունը կազմակերպեց Ընկերության գրասենյակների մոտ 4500 քմ մակերեսի լրացուցիչ ախտահանման աշխատանքները:



● Ընկերությունը, աշխատողների շրջանում COVID-19 համավարակի կանխարգելման նպատակով մեկնարկեց Ընկերության աշխատողների PCR թեստավորման պիլոտային ծրագիրը, որին մասնակցեց 14 աշխատող: Աշխատողների մասնակցությունը PCR թեստավորմանը եղել է բացառապես վերջիններիս համաձայնությամբ:

Տրամադրված անհատական պաշտպանության միջոցներ և պոստերներ /մարտ-հունիս




5.3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՍԵՄԻՆԱՐՆԵՐ


● Հաշվետու ամսում Ծառայությունը «Նարեկ» գիտահետազոտական կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց և իրականացրեց Ընկերության «Արևելք» ՏՏ թվով 6 աշխատակցի համար «Էլեկտրաանվտանգության մասնագիտական որակավորման հեռահար դասընթաց»:

● ՈԱԱ Ծառայությունը, առաջնորդվելով հրդեհային անվտանգության կանոնների՝ գազաէլեկտրաէռակցման աշխատանքների ընթացքում ներկայացվող անվտանգության պահանջներով, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Գազաբոցային աշխատանքների անվտանգությունը» Ստանդարտի պահանջներով, կազմակերպեց և իրականացրեց «Արևելք» և «Արևմուտք» ՏՏ թվով 10 աշխատակցի համար «Էլեկտրագազաէռակցողի մասնագիտական որակավորման հեռահար դասընթաց»:

● Հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները՝ ՈԱԱ Ծառայությունը կազմակերպեց և իրականացրեց Ընկերության ՋՍԳՍ և ՔՄԿ ծառայությունների թվով 16 աշխատակցի համար «Քլորի օպերատորների մասնագիտական որակավորման դասընթաց/գիտելիքների ստուգում»:



2019-2020թթ. կազմակերպված դասընթացների/թեստավորումների (ԴԱՍԸՆԹԱՑ) մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ




5.4. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՅՑՆԵՐ

● Ղեկավարվելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի ժբ) կետի պահանջներով, Ծառայության անմիջական համակարգմամբ «Տեխնիկական անվտանգության ազգային ինստիտուտ» ՍՊԸ կողմից մեկնարկեցին Արտադրական Վտանգավոր Օբյեկտ հանդիսացող Ընկերության թվով 6 ԱՎՕ-ի (5 ամբարձիչ սարքավորում, 1 կաթսայատուն) տեխնիկական անվտանգության փորձաքննության աշխատանքները, որոնց շրջանակներում ուսուսուսասիրվեց Ընկերության ՀՏԿ-ներում շահագործվող ԱՎՕ-ների տեխնիկական անվտանգության փաստաթղթերի, տեխնոլոգիական սարքավորումների և տեխնիկական միջոցների, ինչպես նաև ԱՎՕ-ները շահագործող անձնակազմերի որակավորման փաստաթղթերի և ԱՎՕ-ների շահագործման անվտանգության հրահանգների՝ տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին համապատասխանությունը: Արդյունքում անկախ փորձագետների կողմից տրամադրվեցին փորձագիտական դրական եզրակացություններ:


● Ծառայությունը, զուգահեռ այս աշխատանքներին, իրականացրեց Անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 6 ՀՏԿ-ներում և 2 ստորաբաժանումում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում, ինչպես նաև կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:

2020 թ. իրականացված անվտանգության ստուգայցերի քանակներն ըստ օբյեկտների



5.5. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ԿՈՒԵԿՏԻՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

Ընկերության ստորաբաժանումներին տրամադրված կոլեկտիվ և անհատական պաշտպանության միջոցների դիագրամ



5.6. ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

● ՈԱԱ Ծառայությունը, հիմք ընդունելով Վեոլիա Գրուպի «Աշխատանքներ փակ տարածքներում» Բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջները, կազմակերպեց BEATEX Ընկերությունից ձեռք բերված BW Technologies by Honeywell արտադրության թվով 50 հատ “GasAlertMicroclipX3” գազավերլուծիչի ստուգաչափման աշխատանքները:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ
ՍԵՐՎԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ



6.1. Համակարգչային ցանց



Հունիս ամսվա ընթացքում համակարգչային մասնագետների կողմից իրականացված հիմնական աշխատանքների ցանկը ներկայացված է ստորև՝

- Կարգավորվել է veolia.am կայքի հետադարձ կապ, բաժնի բաժանորդների կողմից ուղարկվող հաղորդագրությունների հետ կապված, վերջին թարմացումներից հետո առաջացած խնդիրը:
- Գնվել և տեղադրվել է նոր լուսարձակային համակարգ ջրաչափերի լաբորատորիաներում տեղադրված ֆոտոստենդերի համար:
- Փոխարինվել են Աբովյան 66ա հասցեում՝ սերվերային սենյակի երկու օդորակիչները:
- Բիլինգային համակարգի տվյալների բազայի սերվերի ծանրաբեռնվածության նվազեցման նպատակով արխիվացվել և ջնջվել են այլևս չօգտագործվող և հնացած տվյալների բազաները:
 - ▶ GrafJam
 - ▶ JrachapBase
 - ▶ Kniq
 - ▶ yerdjur1
 - ▶ YntacikAW
 - ▶ 201701ArmWaterDB
 - ▶ ArmWaterDB
 - ▶ ArmWaterRestoredDB
- Ավելացվել է հիշողություն և օպերատիվ հիշողություն՝ Բիլինգային համակարգի տվյալների բազայի սերվերի համար:
- Բիլինգային համակարգի տվյալների բազայի սերվերի MS SQL տվյալների բազաների կառավարման համակարգում փոփոխվել են Օպերատիվ հիշողության օգտագործման կանոնները՝ MS SQL - համակարգի կողմից օպերատիվ հիշողության ավելի ճիշտ օգտագործման նպատակով:
- Շահագործման է հանձնվել 1-85 գանգերի կենտրոնի՝ նոր “IUConnect” գանգերի կառավարման համակարգը:
- Իրականացվել է 1-85 գանգերի կենտրոնի նոր “IUConnect” գանգերի կառավարման համակարգի շահագործման հանձնելուց հետո առաջացող խնդիրների ուսումնասիրություններ և այդ խնդիրների շուտափույթ լուծումներ:
- Իրականացվել են կարգավորումներ՝ SIP և E1 համարների համակարգերում 1-85 գանգերի կենտրոնի նոր “IUConnect” գանգերի կառավարման համակարգի համար:

6.2. Ինտերակտիվ համակարգ

Հունիս ամսին կատարվել են հետևյալ աշխատանքները.

- 1-85 ծառայության ծրագրի ներդրման խնդիրների ուսումնասիրություն է կատարվել: Որի արդյունքում, տեղի ունեցավ համակարգի ամբողջական վերափոխման աշխատանքներ:
Համակարգը թույլ է տալիս լսել լինչպես ընթացիկ, այնպես էլ նախկինում կատարված գանգերի ձայնագրությունները: Ուսումնասիրել գանգերի կարգավիճակները, քանակները, օպերատորների կողմից չպատասխանված գանգերի քանակները, օպերատորի հանգստյան ժամերի տևողությունը, պատասխանած գանգերի քանակները, ձայնային հաղորդագրությունների քանակը և այլն:
Հաջորդ փուլով կկատարենք այդ համակարգի և Ինտերակտիվ համակարգի ինտեգրման աշխատանքները: Ստորև ներկայացվում է նկարներ ծրագրից.



- Ակտեր

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

Ինտերակտիվ համակարգի միջոցով՝ ապօրինությունների դեմ պայքարի ամբողջ գործընթացը համակարգվում է, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա ապօրինությունների դեմ պայքարի ցուցանիշները.

● Լաբորատոր փորձաքննություններ (ջրաչափերի ապահավաքակցման գործառույթներ)
 Ապահավաքակցման և լաբորատոր փորձաքննությունների եզրակացությունների ամբողջ գործառույթները համակարգվում է ինտերակտիվ համակարգի միջոցով, ուստի ստորև ներկայացվում է հունիս ամսվա լաբորատոր եզրակացությունների ցուցանիշները.

Լաբորատորիա				
Տեղամաս	Միջամտություն		Մնասթեղություն	
	քանակ	հազ. խ/մ	քանակ	հազ. խ/մ
Հյուսիս	1	0.52	47	1.65
Էրեբունի	3	0.96	12	0.15
Ծենգավիթ	3	1.44	10	0.19
Կենտրոն	3	2.32	41	0.20
Սրաբեկիր	2	1.03	33	0.45
Մաշտոց	6	4.80	28	0.31
Շահումյան	6	27.21	15	0.09
Քանաքեռ-Զեյթուն	20	11.69	74	0.71
ԻՌՇՈՐ		-	3	2.94
Լոռի	1	0.52	1	0.28
Սրբիկ	4	1.14	29	0.14
Սրարատ		-	1	0.05
Աբովյան	7	1.95	1	0.04
Հրազդան	2	0.53		-
Սլավեորդի	3	1.16	34	0.38
Սոցք		-	14	0.06
Բերդ		-	1	0.00
Գավառ	3	0.95	27	0.33
Գորիս		-	1	0.00
Դիլիջան		-	6	0.05
Եղեգնաձոր		-	3	0.01
Էջմիածին	4	1.38	56	0.46
Թալին	1	11.28		-
Կապան	4	1.55	13	0.08
Ճամբարակ		-	4	0.02
Մասիս	10	6.11	30	0.22
Մեղրի	1	0.52	3	0.01
Նոյեմբերյան		-	5	0.05
Սրմավիր	11	5.28	124	0.82
Չերմուկ		-	1	0.01
Ստարակ	4	0.45	8	0.05
Զարենգավան	4	1.93	25	0.17
Միսիան		-		-
Մպիտակ		-	20	0.09
Ստեփանավան	2	0.77	9	0.03
Տաշիր		-	12	0.04
Ընդամենը	105	85.47	691	10.09

Խախտման արձանագրություն			
Տեղամաս	Ընդամենը		
	քանակ	հազ. խ/մ	մլն. դրամ
Հյուսիս	3	1.2	0.22
Էրեբունի	9	4.6	0.76
Կենտրոն	3	1.1	0.20
Սրաբեկիր	4	1.6	0.28
Մաշտոց	3	2.6	0.45
Շահումյան	1	0.5	0.08
Քանաքեռ-Զեյթուն	24	66.6	10.24
ԶԿԲ	32	127.1	22.39
Շիրակ	1	0.3	0.05
Արթիկ	1	1.5	0.24
Արարատ	2	1.0	0.16
Հրազդան	1	0.2	0.03
Արտաշատ	3	1.6	0.27
Գավառ	6	2.6	0.40
Էջմիածին	7	4.3	0.72
Իջևան	3	0.6	0.11
Կապան	1	0.3	0.04
Մասիս	1	0.3	0.05
Արմավիր	2	0.8	0.12
Աշտարակ	5	4.2	0.65
Տաշիր	1	38.7	5.92
Ընդամենը	113	262.0	43.38



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Արովյան 66ա
E-mail: info@vjur.am